

ՍՏԵՓԱՆ ԻԼՅԻՉԸ ՀԵՐՔՈՒՄ Է...

(Մահարի-Չորյան գրական կապերի մասին)

Հանրային գրադարանի մատենագիտական բաժնում զարմանքով հանդիպեցի մի քարտի՝ «Գուրգեն Մահարու նամակը Ստ. Չորյանին»։ Նամակը հրապարակել է «Նոր դար» եռամսագիրը՝ ավելի քան տասը (!) տարի առաջ, ավելի ստույգ՝ 1998 թվականի թ. 3-ի 352 էջում։ Փաստ, որը վրիպել էի։ Անցյալ տարի էր, 2009-ին, որ լույս տեսավ Գ. Մահարու «Սիրիրական» ժողովածուն, որտեղ Ստ. Չորյանին ծանոթագրել էի այսպես. «Ստեփան Չորյան (Առաքելյան, 1890-1967), արձակագիր։ Պատկանում էր «չեզոք»՝ այսպես կոչված՝ «ուղեկիցների» խմբին։ Նրա հետ Գ. Մահարին գրական կապեր գրեթե չի ունեցել, եթե չհաշվենք «ի խորոց սրտի» մահախոսականը»։ Հետևում էր մահախոսականի աղբյուրը։ Եվ՝ վերջ։ Գոհե այն ժամանակ ինձ թվում էր, որ՝ վերջ։ Այսօր պարզվում է, որ ինչ-որ կապ այնուամենայնիվ եղել է։ Սկսեցի քանդել կծիկը։ Եվ ահա ձեռքիս տակ է Գ. Մահարու նամակը, որը բերում եմ ամբողջությամբ.

«Թանկագին Ստեփան Իլյիչ.

Պղնձե աքլորը լուր բերեց, ըստ որի հավանել եք «Այգեստաններ»-ս։ Ուրախ եմ և շնորհակալ։ Ձեզ շատ եմ պարտական այդ գործի շարունակման և վախճանին հասցնելու գործում։ Չեմ ասի, որ նման միտք-մտադրություն չեմ ունեցել. բայց քիչ չեմ այդպիսի միտք-մտադրությունները, որոնք մնում են անիրագործելի։ Ձեր ջերմ գնահատությունն ու վերաբերմունքը դրդեց ինձ նստել այդ գործի վրա, ավարտել այն և լույս աշխարհի հանել¹։

Չեմ ուզում ստել. ուրախությունս անխառն չէ. ցավով եմ տեսնում, որ մի ժամանակ կարմիր քաղցենիները խեղդում էին ստեղծագործողներին կեղծ «ինտերնացիոնալիզմի» մատներով, այսօր նույն որակի ստահակները նույն գործն են կատարում «ազգային» «մտահոգություններով»։ Երկու դեպքում էլ տուժում է իսկական գրարվեստը։

1 Կարեն Չորյանի վկայությամբ՝ խոսքը վերաբերում է քանավոր գնահատականին, որ տասնամյակներ առաջ հայտնել էր Ստ. Չորյանը «Գուրգեն խանի տոհմը» վեպի առաջին գլուխների հրապարակումից հետո, որոնք հետագայում կազմեցին առաջին ասքերն «Այրվող այգեստաններ» վեպի։

Ահա թե ինչու ձեր գնահատությունը թանկ է ինձ համար և ուրախալի:
Միրով և հարգանքով Ձեր՝ Գուրգեն Մահարի»
(4 մարտի 1967 թ., Երևան)

Նամակը նամակ է: Սովորական: Մի քիչ պաշտոնական, մի քիչ «համ-հո-տը» պակաս, մի քիչ հասցեատիրոջը շոյող. Գ. Մահարու համար անսովոր «հուզ»-ով նամակ, որը կարող էր գրել գրողը գրողին: Ավելացնենք՝ ինչպես 20-30-ական թվականների, այնպես էլ 60-ականների գրական փղշտանցիների մասին ճիշտ գնահատականներով:

Անսովորը հրապարակման շարունակությունն էր, որը տրված է եռամսազրի հաջորդ երեք էջերում: Լինելով հիվանդ (նույն տարում Ստ. Չորյանը մահացավ) նա թելադրել է իր մտքերը Գ. Մահարու նամակի առթիվ և տաս-քանյա գրառումներում հայտնել հիասթափությունը «Այրվող այգեստաններ վեպից՝ քարը քարի (ուզում էի գրել՝ «տողը տողի») վրա չթողնելով վեպի գաղափարական և գեղարվեստական բովանդակությունում, «էտիկայում ու էսթետիկայում»... (ընգծումներն իրենն են): Համբավավոր գրողը հանգում է եզրակացության, որ Գ. Մահարու «ուժը, պարզապես, չի գորել արվեստի գործ ստեղծելու», որ «արվեստի տեսակետից ևս այն լուրջ արժեք չի ներկայացնում», որ վեպը «մակերեսային» է՝ գրված «թեթևամիտ ընթերցողների» և «որոշ մակերեսային, իմաստակ քննադատների» համար, «գավառական ֆելիետոնիստի» գրչով: Ի վերջո հանվում է դատաժժիռը. «Հավանաբար վեպի ժանրը վեր է նրա ուժերից: Պարզապես չի կարողանում ծայրը ծայրին հասցնել՝ ոչ թե սյուժեի իմաստով, այլ՝ տրամադրության, ոգու...»:

Մի կողմ թողնենք վեպի գաղափարական և գեղարվեստական բովանդակությունը: Խոսակցությունը դրա շուրջը ավելորդ է մեր օրերում: Շահագրգիռ ընթերցողներից խնդրում են ձեռք բերել և կարդալ «Նոր դարի» վերոհիշյալ էջերը՝ հանդգնելու համար, որ ինքը նույնպես շատ բան չի կորցրել ժամանակին այն չկարդալու համար: Կանգ չենք առնի նաև խնդրի «էսթետիկ» կողմի վրա, այլ միայն՝ «էտիկ»...

Ես չեմ հիշում Ստ. Չորյանի այսպիսի անգիջում, կարելի է ասել՝ «ջախջախիչ» գրախոսական: Նման խոսքը բնորոշ չէր նրա գրչին ու բնավորությանը: Կյանքի մայրամուտին առաջացած սկզբունքայնությունը կարելի էր միայն ողջունել, եթե թելադրված տողերը հասցվեին Գ. Մահարուն որպես պատասխան ստացված նամակի: Դա չի արվել որովհետև՝ «Ես պարզապես կանեցել եմ իմ բացասական կարծիքովս չվշտացնել անհաջողության հանդիպած հեղինակին...»:

Փափկանկատության շինծուությունն ակնառու է հենց միայն այդ վերացական, անանուն շարադրանքից, մի կողմ թողած վերոհիշյալ կոշտ գնահատականները: Գրողը, մանավանդ սրտացավ գրողը, միշտ էլ կգտնի հարմար

ձև և խոսքի ձևունություն՝ առանց «էտիկան» խախտելու իր մտքերը գրչընկերոջը հասցնելու համար: Այստեղ ուրիշ բան է թաքցված, որն ստիպել է համաժամար գրողին իր գրառումները թողնել սերունդներին...

Շատ փորձություններով է անցել Ստ. Չորյանն ապրած բարդ, խիստ բարդ տասնամյակներում, բայց միշտ չոր է դուրս եկել դրանցից, որովհետև նրա գլխավոր ինքնապաշտպանական զենքը եղել է ոչ միայն գրական, այլև քաղաքացիական չեզոքությունը, խառնակ գործերից հեռու մնալը, զգուշավորությունը: Եվ այդ զենքը չի դավաժանել նրան, օգնել է ոչ միայն գոյատևել, մնալ ջրի երեսին, այլև ամենահանջ քայլել հասարակական կյանքի մի բարձունքից մյուսը: Գրողների կաստայում կար ևս մեկը, որն աչքի էր ընկնում մնան, գուցե ևս ավելի զգուշավորությամբ՝ Դերենիկ Դեմիրժյանը: Բայց վերջինիս մոտ դա լույս բնավորություն էր, որը չէր խանգարում նրան ժամանակ առ ժամանակ իրականացնել «Նապոլեոն Կորկոտյանի» մնան համարձակ մտահղացումներ: Իսկ Ստ. Չորյանի մոտ զգուշավորությունն արյան բաղադրություն էր ու ապրելակերպ: Իմ ի՞նչ գործն է, - ասելով՝ նա շրջանցել է գրական և հասարակական բազմաթիվ խութեր...

Բայց ահա, չգիտես որտեղից, ավելի ծիշտ՝ Չարենցի ու Բակունցի «աշխարհից», գրականություն է վերադառնում Գուրգեն Մահարին: Թող վերադառնա՝ իմ ի՞նչ գործն է... Բայց մոխիրներից հառնած, այն աշխարհից վերադարձած այս մարդը գրական պարտամուրհակներ է ներկայացնում գրական աշխարհին, խոսում գրական ծշմարիտ չափանիշներից... Ստ. Չորյանն իր նուրբ շոշափուկներով չէր կարող չզգալ, որ գրական այն աշխարհում, որը պատկերացնում և որին ծգտում էր Գ. Մահարին, ինքը չէր կարող զգալ իրեն ապահով, որովհետև աչք էր ծակում ստեղծագործական «խիջրան» այծմեական թեմաներից: Լինելով կարդացած ու զարգացած անձնավորություն՝ նա չէր կարող ծանոթ չլինել Լիոն Ֆեյխթվանգերի պատմավեպերին, չհասկանալ, որ քսաներորդ դարում իսկական պատմավեպերը գրվում են հանուն այսօրվա, ժամանակակից խնդիրների, իսկ իր պապթագավորները, վարազդատներն ու հայոց բերդերը պատմավեպեր էին հանում... հեռավոր անցյալի, որոնց ոգեկոչումները կարելի էր համեմատել մայիսմեկյան կոչերի հետ... Իսկ մյուս կողմից ի՞նչ աներ նա, եթե ժամանակակից թեմաներին դիմելիս դուրս էին գալիս հեղկոմի մախագահներ, գրադարանի աղջիկներ, թիթեռնիկի կյանքով ապրող ինչ-որ կոմունա կամ մի կյանքի պատմություն, որին, ի դեպ՝ փթերով աղ ու պղպեղ էր պակասում Գ. Մահարու «Մանկության ու պատանեկության» կողքին դրվելու համար... Ժամանակակիցներից մեկի մասին հայտնած վերջինիս կարծիքը լիովին ի գործ էր և Ստ. Չորյանի դեպքում. «ճաշակով մարդ լինել և սիրել ճաշակով հագնվել, դեռ չի նշանակում լավ դերձակ լինել...»:

Խոսքը, իհարկե, մեծ գրականության մասին է, որը տարբերակում էր և

Ստ. Չորյանը: Դժվար էր, դժվար էր ապրել գրեթե ութ, գրիչ շարժել վեց տասնամյակ, շարել գրադարակին տասից ավելի հատորներ և լինել հեղինակ ընդամենը մի քանի ճանաչված պատմվածքների...

Իսկ այս անհանգիստ Մահարին մեկ անգամ չէ, որ դատապարտում է պատմավեպային «քաղաքականությունը»: Հումորներ է անում ամանորյա, անդրաշխարհում Դերենիկ Դեմիրճյան է խոսեցնում, Հայաստանի գրողներից պատմում, մեղադրում նրանց պատմական թեմաներով հրապուրվելում, սպառնում անդրաշխարհային երկրորդ տեսակի ուտելիքներով, որդնած խնձորներով, «Հայոց բե՛րդն» է հիշատակում...¹

Գ. Մահարին ոչ միայն հումորով, այլև քննադատական լուրջ խոսքով էր մոտենում խնդրին: Եվ եթե, պահպանելով «էտիկն» զգացումը, չէր տալիս անուններ, միևնույն է, նրբազգաց Ստ. Չորյանը չէր կարող դրանցում չտեսնել իրեն: Կատարենք մի երկու մեջբերում և փորձենք դրանք կարդալ այն օրերի պատմագրի աչքերով.

«...անհատի պաշտամունքի շրջանի անկոնֆլիկտայնության դոկտրինան սահմանափակել էր գրողի հնարավորությունները և նա հնարավորություն չի ունեցել տալ կյանքի լրիվ պատկերը...

«Գրողն իրեն ավելի ազատ և անկաշկանդ է զգացել պատմավեպեր գրելիս, որովհետև նրանից չի պահանջվել անպայման «գեղեցկացնել» անցյալը, գրադվել «գեղարվեստական կոսմոսիկայով»...

«Թվում է, թե հասել է ժամանակը, երբ մեր գրողներին կհաջողվի ընթերցողի ուշադրությունը գրավել ժամանակակից գործերով և պատմավեպերը մղել երկրորդ պլանի վրա: Մենք հեռու ենք թերագնահատելու պատմավեպերի արժեքը, նրանց դաստիարակչական նշանակությունը, սակայն չպետք է մոռանալ, որ գրողի և գրականության առաջին չափանիշը ժամանակակից կյանքը պատկերող մեծ արձակն է...

«Այս «ինքնաապահովագրման» քաղաքականությունը չափազանց ծանր է ազդում գրողի աշխատանքի վրա... Գրողը կորցնում է իր ինքնավստահությունը, գրողը կորցնում է իր դեմքը և վերածվում է խմբագրի «ժաշակին» մի կերպ բախարարող անհոգի մի մեքենայի կամ գնում է դեպի անցյալը... Լեգենդներ է գրում կամ պատմավեպեր...

«Եւոյն քննադատները մեր կլասիկների մասին հատորներ կարող են գրել կամ մի քանի գրախոսականներով ու հոդվածներով հանդես գալ միևնույն պատմավեպի մասին: Իսկ ժամանակակից թեմատիկայով գրված վեպի մասին... չէ՛, ավելի լավ է հեռու մնալ «փորձանքից»»²:

1 Անդրաշխարհի մատույցներում, «Գրական թերթ», Եր., 1961, 1 հունվարի, թիվ 1:

2 Мысли велух (Литература и время). "Коммунист", Ер., 1964, N 33, 8 февраля, стр. 3.

«Չկա իսկական գրող դուրս իր օրերից և ներկայից: Եվ որքան գրողը խորապես զգա իր ժամանակը, այդպիսի իր օրերի այդող խնդիրներով, այնքան տաք կլինի նրա շունչը և ներշնչված ու դիպուկ կլինի նրա բառն ու բանը»:¹

«Լինել տաղանդ առանց կանգնած լինելու գրականության զարգացման արդի աստիճանին – հնարավոր չէ: Այդ արդեն ոչ թե «մեծ» կամ «փոքր» տաղանդ է, այլ մեծ կամ փոքր շնորհք, որը մեր շռայլության քաղաքականության շնորհիվ տաղանդ է կոչվել»²:

Այս և նման ակնարկները չէին կարող մնալ աննկատ և աստիճանաբար Ստ. Չորյանը հայտնվում էր հակառակորդների այն բանակում, որի բնորոշումը տվել էր Գ. Մահարին «Այրվող այգեստանների» շոգ օրերին. «Շատերի քեֆին ես դիպել էի թե՛ գրավոր, թե՛ մանավանդ բանավոր, և նրանք գտան «հարմար» առիթ փոխվեծի... ցավալի էր, որ վեպը վարկագրելու մութ գործին լծվեցին մարդիկ, որոնք առաջնորդվեցին ոչ թե համոզմունքով և բանականությամբ, այլ հաշիվ մաքրելու գուցեն չգիտակցված մոլուցքով...»³:

Բացառություն չկազմեց, ինչպես տեսանք, և Ստ. Չորյանը:

Ստ. Չորյանն ունեցել է պարկեշտ գրողի համբավ: Նրա անվան շուրջը չեն եղել և չկան այնպիսի խոսակցություններ, ինչպես Ն. Չորյանի կամ Հր. Քոչարի: Բռավո,– կարելի է բացականչել: Եվ միայն ողջունել կարելի է, որ պարկեշտ այդ անձնավորությունը 1929-1937 թվականներին եղել է ՀԽՍՀ Կենտգործկոմի անդամ, 1950-1954 թվականներին՝ Հայաստանի սովետական գրողների միության վարչության անդամ, 1962-ից՝ ՀԽՍՀ Մինիստրների սովետին առընթեր Լենինյան մրցանակների կոմիտեի նախագահ, 1965-ից՝ գրականության, արվեստի և ծարտարապետության պետական մրցանակների հանձնաժողովի նախագահ, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրության անդամ և գրականության գիտաժյուլային խմբա-

1 Չարտասանված ձառ երիտասարդ գրողների համագումարում: Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 1741, ցուցակ 1, գործ 20:

2 ...Ամբողջ ծայնով... «Գ. Թ», Եր., 1960, 20 մայիսի, թ. 21:

Գրական քննադատության «շռայլության քաղաքականությունը» և տեղծած «կուռքերին» Գ. Մահարին անդրադարձավ և Մ. Արմենին գրած նամակում. «...Իսկ քեզ չի՞ մտափողում, որ 1936 թվականից արձակ ու սանձարձակ ամեն ոճերով ու պոչերով, «գիտական» մենագրություններով և ամեն ձևով փառաբանում են Չորյանին, Չորյանին, Սարյանին: Եվ մինչև հիմա գրողներին թվագրելիս սկսում են այս սուրբ երրորդությունից... Ժամանակը, չեն կասկածում, ամենակարող և իմաստուն, ամեն ինչ՝ և՛ բան, և՛ գործ, իր տեղը կղնի» (25 հուլիսի 1963 թ.):

3 Ֆրանսահայ գրականագետ-քննադատ Գեղամ Ֆենդրեանին (1903-1983) ուղղված նամակից (22 դեկտ. 1968 թ.):

գրության խորհրդի նախագահ, ընտրվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի IV, V, VII գումարումների (12 տարի) պատգամավոր, պարգևատրվել է Լենինի, Աշխատանքային կարմիր դրոշի, «Պատվո Օշան» շքանշաններով... Մի տեսակ՝ գրական գեներալիսիմուս...

Պետական ու հասարակական պաշտոնների ու դիրքերի, կառավարական պարգևների այս մեծաշնորհների տարափը հարի՛ր է պարկեշտությանը: Այն էլ ինչպե՛ս: Չէ՛ որ ոչ թե պաշտոնն ու կոչումներն են բնորոշում մարդուն, այլ մարդն է փայլ ու իմաստ տալիս դրանց: Ուրիշ հարց է թե՛ որտե՞ղ, ե՞րբ, ի՞նչ առիթով է Ատ. Չորյանն օգտագործել իրեն տրված լծակները և պարկեշտության հետ դրսևորել նաև սկզբունքայնություն, քաղաքացիական համարձակություն: Իսկ որպես գրող, թեկուզ և եզովպոսյան լեզվով: Չէ՛ որ միայն ընտանիքի օրինակելի հայր և առաքինի ամուսին լինելը, փողոցային երեսնկության կանոնները չխախտելը քիչ է ոչ միայն ստացած պաշտոնների ու կոչումների, այլ թեկուզ շարքային գրողի համար: Մի առիթով Գ. Մահարին գրել է. «*Դևի՛ մեջ՝ "դիվային ստեղծագործական խառնվածք" Աստված տա, որ չի տվեր... այո, նա "հեզ ու բարի է, անկեղծ ու ծշմարտախոս", "մարդասեր ու հայրենասեր է"՞... պահպ ալ ասանկ խրյախ մարդ էր, բայց... բանաստեղծ չէր... ինչևէ!*»¹:

Առաքինի Ատ. Չորյանը գրասեղանի առաջ չկանցավ օգտվել անգամ խրուչշովյան «Ճնհալից»: Որովհետև իր կարծիքով ժամանակավոր է այդ հալոցքը:

Նա չկանգնեց Գ. Մահարու կողքին անգամ այն ժամանակ, երբ վերջինս միայնակ, քննադատների քար լուծության տակ պայքարում էր գրական մոլախոտի՝ սիրասների ու դարյանների դեմ: Ինչո՞ւ: Որովհետև ինքը ոչ միայն բուսնել, այլև բոյ էր ամել գրական այդ ֆոնի վրա: Որովհետև գրական նոր սերնդի գործերը, «Ահնիճորը», «Հեղեղը», «Շոգ ամառը» խորթ էին նրան... Ջահելներ են, ջահելություն են անում, բայց Մահարու «Այգեստանները» ջահելության արգասիք չեն համարի, այն նոր խոսք էր սովետահայ արձակում, որը խորացնում էր Չարենց-Բակունց հունը և հարցականի տակ վերցնում խորհրդահայ արձակի գորյանական «Նվաճումները»...

1 Դե (Ղարաբեկեան Մարգար, 1901-1976), իրանահայ բանաստեղծ:

2 ...այո, նա «հեզ ու բարի է, անկեղծ ու ծշմարտախոս», «մարդասեր ու հայրենասեր է»...: Անդրադարձն է Յովի. Մարդու գրական դիմանկարի ամփոփիչ տողերի. «Չէ՛, այս Դեը, բոլորովին առասպելների Դեը չէ, որի մասին բացասական կարծիք կայ ժողովրդի մէջ: Սա մեր բանաստեղծ Դեն է, հեզ ու բարի, անկեղծ եւ ծշմարտախոս, մարդասէր ու հայրենասէր...»:

3 Սփյուռքահայ գրող, խմբագիր Անդրանիկ Անդրեասեանին (1909-1996) ուղղված նամակից, 1 ապրիլի 1965 թ.:

ԽՍՀՄ-ի փլուզումը, նոր գաղափարախոսությունը նրա մտքով չէր անցնում: Ահա թե ինչու նա իր ողջ համարձակությունը գործի դրեց «Այրվող այգեստաններին» և դրա հեղինակին, իր պատկերացումով՝ ևս մի հարված տալու համար: Որովհետև գրական միջավայրն ու նորմերը նրան թվում էին անխախտ: Դրանք կարող էին ենթարկվել կոսմետիկ, բայց ոչ արմատական փոփոխությունների: Ուրեմն «Այգեստանները» դատապարտված է վերջնականապես: Բայց նույն զգուշավորությունը, որի հետ համընթաց քայլել էր նա ողջ կյանքում, շարունակում, որ իր կարծիքը պետք է ոչ թե ուղարկվի փոստով, այլ մնա թղթի վրա՝ սերունդների համար:

Գ. Մահարին այնքան հիվանդ չէր, որ կարիք զգար Ստ. Չորյանի նրբագացության: Վերջինս իր գրառումները կատարել է մարտի 20-ին, իսկ մեկ ամսից՝ ապրիլի 21-ին, Գ. Մահարին դուրս եկավ Երևանից ամառային շրջագայությամբ՝ Սոչի (16 օր) - Մոսկվա (20 օր) - Պալանգա (մինչև սեպտեմբեր) գծով: Նա ժամանեց Երևան և գրեց Ստ. Չորյանի մահախոսականը, խորագրելով այն «Ի խորոց սրտի...»¹:

Կամա-ակամա գալիս ես եզրակացության, որ Ստ. Չորյանն ինչ-որ մտքեր թղթին էր հանձնում ոչ թե հասարակության ու գրականության շահերից ելնելով, այլ «հաշիվ մաքրելու» մանր նպատակով: Ողջ կյանքում հաշտ ապրել էր. Քոչարի հետ, հանդիպելիս ժպտալ, որպիսությունը հարցնել, բայց նրա մասին թողնել օրագրային անմախընթաց դաժան տողեր... Սա նույնպես ինչ-որ բան ասում է...

Սակայն միգուցե նա չի ընդունել «Այրվող այգեստաններ» վեպը ի՞ր, զորյանական մոտեցումով: Եվ այստեղ կարևորվում է այն զանգակատումը, որից ղողանջում էր արձակագիր Ստ. Չորյանը:

Ստ. Չորյանն ապրեց մինչև անցյալ դարի 70-ական թվականները, բայց էությանը մնաց XIX դարի գրող: Հենց թեկուզ նրա «Գրառումները» կարդալիս, «Այրվող այգեստաններին» ներկայացվող պահանջները վերլուծելիս, աչքի առաջ կանգնում է մի գրող, որը վաղօրոք կազմում էր ապագա մտահղացման պլանը, բաժանում այն մասերի, ընտրում անուն-ազգանուններ և նստում գրասեղանի առաջ... «աշխօր» գցելու:

Գ. Մահարին այդ գրողներից չէր: Նա չի եղել իր հերոսների գլխավոր հրամանատարը, իսկ այդ հերոսները չեն եղել խամաճիկներ, այլ՝ կենդանի մարդիկ, այնքան կենդանի, որ գրողին մնացել է սոսկ արձանագրողի դերը: «Ոչ թե ես եմ թելադրում գրչին, այլ գրիչը՝ ինձ»՝ հարցազրույցներից մեկում ասել է նա²:

1 «Գ. Թ.», Եր., 1967, 20 հոկտ., թ. 43

2 Ստեղծագործական աշխատանքի գաղտնիքները, «Գարուն», Եր., 1980, հունվար, թ. 1, էջ 94:

Ցավով էի կարդում Ստ. Չորյանի «Գրառումները», որովհետև դրանք միակն են առաքինի գրողի ստեղծագործական երկար կյանքում, որոնք վերաբերում են Գուրգեն Մահարուն: Ցավում էի իր համար...

Ք. Տ.- Կուզե՞նայի կանգ առնել հնարավոր մի թյուր տպավորության վրա, որը կարող է առաջանալ ընթերցողի մոտ: Ինստիտուցիոնալ է, վերջին ժամանակները դա լրջորեն անհանգստացնում է ինձ:

Գուրգեն Մահարին չի ունեցել կոմպզան քննավորություն: Նա ունեցել է ընկերներ, ավելի հաճախ մերձգրական ոլորտներից, որոնց հետ սերտ կապեր է պահպանել տասնամյակներով: Նրա կսմիթները, գրական բախումներն արդյունք էին ոչ թե կոնֆլիկտամետ խառնվածքի, այլ՝ գորշ միջավայրի, որում ապրում էր նա գրեթե մենակության մեջ, և հավատարմությամ՝ գրական կոչումին, որը պահպանվեց ողջ կյանքում:

Հետևաբար ոչ մի կոմպզանություն կամ կոնֆլիկտամետություն ես ժառանգել չէի կարող: Իմ հրապարակումները հետևա՞նք են տգեղ, անհանդուրժելի քայլերի, որոնց արձագանքներն այս կամ այն ձևով հասնում են մեր օրերը: Գուրգեն Մահարին ապրել է քարոյ կյանք, կենդանության օրոք նա բախվել է այնքան անարդար գործերի ու անարդար մարդկանց, որ նրա նկատմամբ ոչ մի անարդարություն, գոնե հետմահու, չպետք է մնա անպատասխան: Եվ նա թողել է այնպիսի գրական ժառանգություն, որ տալիս է այդ պատասխանների համար անսահմանափակ հնարավորություններ:

Ք. Ք. Տ.- Առանց որևէ հումորի կամ խայթոցի՝ ի սրտե շնորհակալ եմ կարեն Չորյանին՝ Գ. Մահարու նամականին ևս մեկով ավելացնելու և մեկ անգամ ևս ընթերցողի առաջ «բացվելու» ընձեռած հնարավորության համար:

Նույն